# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**03 հոկտեմբերի 2025 թվականի N 463-Ա**

**ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 100 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի գրությունը և Սյունիքի մարզպետի տեղակալ Նարե Ղազարյանի զեկուցագիրը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից 400.000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով տարեցների միջազգային օրվա կապակցությամբ դրամական պարգևատրում հատկացնել Սյունիքի մարզի 100 և բարձր տարիքի չորս քաղաքացու՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ Ռուզաննա Ալավերդյանի և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Մարիաննա Ստեփանյանի հաշվեհամարներին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:
3. Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ Ռուզաննա Ալավերդյանին և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Մարիաննա Ստեփանյանին 5-օրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություններ դրամական պարգևատրման հատկացման վերաբերյալ:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 03
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2025թ-ի հոկտեմբերի 03-ի N 463 Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

դրամական պարգևատրում ստացող տարեցների

| N | Անուն Ազգանուն | Համայնք,բնակավայր | Գումարի չափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Զիլֆուղարյան Վարթիգյուլ | ք. Սիսիան | 100.000 (հարյուր հազար) |
| 2 | Գրիգորյան Մարուսյա | ք. Գորիս | 100.000 (հարյուր հազար) |
| 3 | Գրիգորյան Լուսիկ | ք. Կապան | 100.000 (հարյուր հազար) |
| 4 | Խաչատրյան Սեդա | Մեղրի,գ. Շվանիձոր | 100.000 (հարյուր հազար) |

Recoverable Signature

X

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

Գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան